Շնորհավորանք. Արամ Իսաբեկյան. «Բժշկությունը արվեստների արվեստն է» - «Ապագա բժիշկ», հ.7-8, 2010

«Բժշկությունը արվեստների արվեստն է» Հիպոկրատ

Երևանի Մխիթար Հերացու անվան բժշկական համալսարանի ռեկտոր, մեծարգո տիկին Քյալյան, հարգարժան կոլեգաներ, սիրելի ուսանողներ: Հոբելյանները պատեհ առիթ են բուհական կոլեկտիվի երկարամյա գործունեությունն ի մի բերելու, վերլուծելու, գնահատելու համար: Այսօր ձեր 90-ամյա հոբելյանի առթիվ օբյեկտիվորեն պետք է փաստել, որ դուք այն նշում եք հարուստ կենսագրությամբ, առողջապահության ոլորտում անուրանալի ձեռքբերումներով և գիտական մեծ վաստակով: Ձեր բուհի շրջանավարտների նկատմամբ պահանջները հատուկ են, քանի որ նրանց է վստահված ամենաթանկ բանը՝ ազգի գենոֆոնդի առողջությունը: Պատերազմի դաշտում, թե՝ խաղաղ պայմաններում պարտքի բերումով դուք միշտ առաջին գծում եք և ջանք չեք խնայում հարազատ և հավատարիմ մնալ Հիպոկրատի երդմանը: Իսկ ձեր արտասահմանցի շրջանավարտներն աշխարհով մեկ տարածում են ձեր բուհի բարի համբավը: Հայտնի բան է՝ վիրաբույժի ձեռքը պետք է վարժ և ամուր լինի, իսկ հոգին՝ նուրբ և զգայուն: Այս առումով, մեզ համար, որպես գեղարվեստի բուհի, չափազանց ուրախալի է, որ բժշկական համալսարանի ղեկավարությունը հատուկ ուշադրություն է դարձնում իր սաների գեղագիտական դաստիարակությանը, պայմաններ ստեղծում, որ նրանք անմիջականորեն շփվեն մշակույթին և գեղեցիկի արվեստին: Հարգարժան հոբելյարներ, թույլ տվեք Երևանի գեղարվետի պետական ակադեմիայի դասախոսների և ուսանողների անունից ջերմորեն շնորհավորել ձեզ հոբելյանի առիթով, ցանկանալ նոր հաջողություններ ձեր բարդ ու կարևոր առաքելության մեջ:

Հարգանքներով՝ Արամ Իսաբեկյան
ԵԳՊԱ ռեկտոր, պրոֆեսոր, արվեստի վաստակավոր գործիչ